ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Էդուարդ Բաղդասարյան, Բյուջետային գործընթացի համակարգման վարչության բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2025 թվականի մարտի 24-28-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանցի (PEMPAL) կողմից կազմակերպվող PEMPAL ծրագրի ողջ ցանցի լիագումար նիստի նպատակն էր՝ քննարկել նոր միտումներ և գործիքներ, որոնք կհաստատեն պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) ապագան և կենսական դեր կխաղան PEMPAL 2026-2030թթ. ռազմավարությունում: Քննարկել պետական ֆինանսների կառավարման տարբեր թեմատիկ ոլորտների փորձը:

5. Քննարկված թեմաները.

Նիստի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Ստրատեգիական ՊՖԿ,
2) «Կանաչ» ՊՖԿ,
3) Թվային ՊՖԿ,
4) Կառավարչական հաշվետվողականություն,
5) Վարժություններ և գործնական խմբային աշխատանքներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի ընթացքում համառոտ ներկայացվել է մասնակցային բյուջետավորման մեր երկրի փորձը, սուբվենցիաների հատկացման բարեփոխումները: Կլոր սեղանի շուրջ քննարկվել են

հիմնական հնարավորությունները և խնդիրները, որոնք վերաբերում են ռազմավարական պլանավորման կապին պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) հետ և առաջարկվել են միջոցառումներ ու գործիքներ, որոնք PEMPAL-ը կարող է տրամադրել մասնակից երկրների աջակցման համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նիստի ընթացքում ձեռքբերված գիտելիքները լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը:

01.04.2025թ.